

**ԿԱՆՈՆԱԳԻՐ**  
**ՀԵՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅԱԿԱՆ**  
**ՄԻՋԻԹԵԱՆ**

ՎԱՀԵՐԱՑՈՒԱԾ  
ԱՌԱՋԻՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ  
ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԵՆ



ՄԱՐՏ 4, 1928, ՊՈՍՏՈՆ

ԳԱՆՈՆԱԳԻՐ  
ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅՑԻԱԿԱՆ  
ՄԻՌԻԹԵԱՆ

ՅՕԴ. Ա. ԱՆՈՒՆ

Միութեան անունն է ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴ-  
ՅՑԻԱԿԱՆ ՄԻՌԻԹԻԻՆ :

ՅՕԴ. Բ. ՆՊԱՏԱԿ

Միութեան նպատակն է Հայաստանի մէջ  
ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ մը հիմնել :

1. Տուներ շինելով յարմար հողի մը վրայ,  
և հոն տեղաւորել մասնաւորագչս Խարբերդ  
Գաւառի Հայեր :

2. Ճարտարարուեաներու հաստատումով  
անոնց գործ տաեղծել :

ՅՕԴ. Գ. ԱՆԴԱՄԱԿՅՑՈՒԹԻԻՆ

Միութեան կրնան անդամակցիլ Խարբերդ  
Գաւառի Հայեր՝ վճարելով 1 տոլար մուտք եւ  
երկու տոլար տարեվճար :

Յ0Դ. Դ. ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ ԵՒ ԱՆՈՒՑ  
ԳԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մասնաճիւղեր կրնան կաղմուիլ Հայ գաւ-  
դութներու մէջ՝ պայմանաւ որ անդամներու  
թիւը առնուազն 5 ըլլայ:

1. Մամաճիւղերու վարչութիւններ կ'ընտ-  
րուին անդամական ժողովի մը մէջ, ներկանե-  
րու մէծամասնութեամբ:

Նուազագոյն թիւը վարչական մարմնոյն է  
3, առաւելացոյնը՝ 7: Բնկերութեանս սո-  
վորական պաշտօնեաները, այն է, Ատենա-  
պետ, Ատենապետ, Ատենապետ, Վահնձապահ, կը կատա-  
րեն մասնաճիւղերու գործերը:

2. Պաշտօնէութեան ըրջանն է սարի մը,  
և սակայն վերընտրելի են:

3. Վարչութիւններ իրաւասու են Յանձ-  
նախումբեր կաղմել և անոնց բացառիկ գոր-  
ծեր յանձնել՝ պայմանաւ որ անոնք պատաս-  
խանատու ըլլան վարչութեան:

Յ0Դ. Ե. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

1. Կեդրոնական Գործադիր Մարմինը կը  
բարկանայ 9 անձերէ, որոնք կ'ընտրուին Պատ-  
պամաւրական ժողովի մէջ:

2. Այս մարմինը որ կը բարձադրէ Միու-  
թեան գծած օրէնքները, ինք ի՞շմէջէն կ'ընտրէ

պաշտօնեաներ. Ատենապետ, Փոխ-Ատենա-  
պետ, Ատենապետ, Փոխ-Ատենապետ, Գան-  
ձապահ, Հաշուակալ, մնացեալները իրեւ  
Խորհրդականներ, որոնք ամէնը անհատաբար  
եւ հաւաքաբար պատասխանատու են Պատգա-  
մաւրական ժողովին:


3. Կեդրոնական Գործադիր Մարմինը իրա-  
ւունք ունի ի հարկին օգնական պաշտօնեաներ  
եւ գործիչներ վարձել:

4. Դրամական գործառնութեանց պատաս-  
խանատու է Կեդրոնական Գործադիր Մարմի-  
նը ամբողջութեամբ, սակայն դրամական խըն-  
դիրներու վերաբերեալ գրութիւնները պէտք է  
կը են միայն Ատենապետին, Ատենապետին եւ  
Գանձապահին ստորագրութիւնները, երբ այդ  
գրութիւնները վաւերացուած են Կեդրոնական  
Գործադիր Մարմինի կողմէն:

5. Կեդրոնական Գործադիր Մարմինի շըր-  
ջանը մէկ տարի է:

Յ0Դ. Զ. ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒՈՒ  
ԳԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ատենապետի պարտականութիւնն է հըս-  
կել ժողովներու կանոնաւորութեան, որոշում-  
ներու անթերի գործադրման, Ատենապետի  
հետ ստորագրելով բոլոր պաշտօնական թղթ-



1 - 19 Տաջիկ

թակցութիւնները : Անոր բացակայութեան Փոխ  
-Առենապետը պարտաւոր է ժողովները վարել,  
եւ Առենապետի պարտականութիւնները կա-  
տարել :

2. Առենագորի պարտականութիւնն է ժո-  
ղովներու հարազատ արձանագրսութիւնները  
պահել, թղթակցութեանց եւ պրօպականու  
դործերը օրը օրին կատարել, եւ բոլոր պաշ-  
տօնական գրութեանց ներքեւ ստորագրել Առե-  
նապետի հետ : Անոր բացակայութեան Փոխ-  
Առենագորը պարտաւոր է ընել :

3. Գանձապահին պարտականութիւնն է  
ստացած գրամները գրամմատուն գնել օրը  
օրին, եւ անոնց մաքուր հաշիւը պահել, եւ ա-  
մէն մէկ ժողովի հաշուեցոյց մը ներկայացնել :

Գանձապահը 2000 տոլարի երաշխաւորու-  
թեան տակ ըլլալու է իր պաշտօնէութեան ամ-  
րող չըջանին :

4. Հաշուակալին պարտականութիւնն է  
հաշիւներու կանոնաւորութեան հսկել : Ել և  
մուտքի հաշիւէն ինք ալ օրինակ մը ունենալու  
է ուրույն տոմարի մը մէջ :

### ՅՈՒ. Է. ՊԱՏԳԱՄԱԽՈՐԾՎԱՆ ԺՈՂՈՎ

Պատգամաւորական Ժողովը կը գումարուի  
տարին անդամ մը :

Մասնաձիւղեր իրենց պատգամաւորները  
կ'ընտրեն նախապէս ծանուցուած անդամական  
ժողովի մը մէջէն :

Մինչեւ 50 անդամ ունեցող մասնաձիւղ մը  
կ'ընտրէ Մէկ պատգամաւոր, 50է մինչեւ 100  
անդամ ունեցող մասնաձիւղ մը կ'ընտրէ Եր-  
կոմի, իսկ 100-էն աւելի անդամ ունեցող մաս-  
նաձիւղ մը Երեք :

Պատգամաւորական Ժողովի իրաւասու-  
թիւններն են :

1. Միութեան նպատակի յառաջացման եւ  
գործելակերպի համար տնօրինութիւններ ընել :

2. Գծել օրէնքներ եւ կանոններ, առանց  
հակասելու Միութեան նպատակին :

3. Հսկել Միութեան գանձի պահպանման  
եւ անոր գործածութեան :

4. Հսկութեան կեղսոնական Գործադիր Մար-  
մին մը բաղկացեալ 9 անձերէ, որը իր նիւթա-  
կան եւ բարոյական համարատուութիւնը ընել  
պարտաւոր է Պատգամաւորական Ժողովի :

### ՅՈՒ. Է. ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԵՐ

Կեղսոնական Գործադիր Մարմինը իրաւա-  
սու է որեւէ ատեն յանձնախումբեր կազմել Մի-

ութեան գործին մղում տալու համար : Օրինակի համար :

1. Տնտեսական Յանձնախումբ, որուն պաշտօնն է միջոցներ խորհիլ եւ գործադրել հասոյթներ ապահովելու համար՝ կերպոնական Գործադիր Մարմինի հետ խորհրդակցելով :

2. Պրոպականատի Յանձնախումբ, որուն պաշտօնն է Միութեան գործերը հրատարակել, յարմար եւ զօրաւոր միջոցներով :

### ՅՈՒ. Թ. ՀԱՍՈՅԹ

Միութեան նպատակը իրականացնելու համար մեծ հասոյթ մը ապահովելու միջոցներ կը նկատուին .

1. Մասնաճիւղերու մուտքերը եւ անդամական տուրքերը :

2. Բնդհանուր հանդահակութիւն լայն շըրտանակներու մէջ :

3. Հանդէսներ, երեկոյթներ, եւայլն :

4. Բացառիկ նուէրներ :

5. Բնկերութիւններէ նուէրներ :

### ՅՈՒ. Ժ. ԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

Հայրենակցական Բնկերութիւններէ ստացուած գումարները անձեռնմխելի են եւ պիտի

գործածուին Հայաստանի մէջ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԸ չինելու համար միայն : Խոկ Միութեան տեղական ծախքերը պիտի հոգացուին Միութեան ջանքերով դոյլացած ուրիշ գրամմներէ :

### ՅՈՒ. Ժ. ԼՈՒԾՈՒԹ

Որքան ատեն երեք մասնաճիւղեր գոյութիւն ունենան, Միութիւնը իր գործը կը շարունակէ, հակառակ պարագային Միութիւնը կը լուծուի եւ գտնուած բոլոր գոյքերն ու դըրամները կը յանձնուին Հայաստանի օրուան կառավարութեան գործածուելու Միութեան նպատակին համար :

### ՅՈՒ. Ժ. ԲԱՐԵՓՈԽՈՒԹ

Միութեան կանոնագիրը կրնայ փոխութիւրացի անունէն եւ նպատակէն՝ Պատգամաւորական ժողովի մը մէջ երկու-երրորդին քուէովը : Որեւէ բարեփոխումի պարագային ծանուցուածներ զրկուելու են մասնաճիւղերու, ժողովէն առ նուազն 2 ամիս առաջ :

200

— 8 —

ԽԱՐԲԵՐԴԻ ԴԱՇՏ ԸՍՆԼՈՎ, ԿԸ ՀԱՄԿՑՈՒԻ

Բաղմաշն, Գայլու, Գեղվանք, Գոմք, Դատէմ,  
 Եղեղի, Զառթարիչ, Էրթմնէկ, Իջէտ, Խոխ,  
 Խոյլու, Խուլաղիւզ, Հասլուսի, Հիւէյնիկ,  
 Հողէ, Մէղիրէ, Մուռի, Մօրէնիկ, Շնդիւ,  
 Մարբցիկ, Մօրսըրէ, Վարդաղիլ, Փէրչէնճ,  
 Քաղաք, Քէսիրիկ և ուրիշ մեծ կամ փոքր  
 գիւղեր, Խարբերդի գաշտին մէջ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0755417

1  
1952